

## ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 1/2

8 ապրիլի 2016 թ.

Քննարկվեց Ա/Ձ Ավագ Սամվելյանի 17.03.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Արտաշատի ՏՀՏ 22.02.2016թ-ի թիվ 6116986 ակտի դեմ:

#### **Ա/Ձ Ավագ Սամվելյանի գանգատում բերված փաստարկները.**

Համաձայն Արտաշատի տարածքային հարկային տեսչության 26.01.2016թ. թիվ 6116998 հանձնարարագրի անհատ ձեռնարկատեր Ավագ Սամվելյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որի արդյունքում 22.02.2016թ. կազմվել է թիվ 6116986 ստուգման ակտը: Ստուգման ակտով Վ.Սարգսյանի անվան մարզադաշտին կից տարածքում կազմակերպվող գյուղատնտեսական արտադրանքի (ծաղիկի) վաճառք իրականացնելիս տվյալ հասցեում գրանցված և տեղադրված ՀԴՄ չունենալու համար ԱՁ-ին տուգանք է առաջադրվել 300 000 դրամի չափով:

Ստուգման ակտը կազմվել է օրենսդրության պահանջների խախտումներով և ենթակա է անվավեր ճանաչման հետևյալ պատճառաբանությամբ.

1. Ակտում արձանագրվել է, որ Երևան քաղաքի Վազգեն Սարգսյանի մարզադաշտին կից տարածքում ԱՁ-ին պատկանող առևտրի կետից կատարված գնման դիմաց գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել, քանի որ ԱՁ-ն տվյալ հասցեում գրանցված և տեղադրված ՀԴՄ չունի: Տվյալ վայրում ԱՁ-ն առևտրի կետ չունի և տվյալ հասցեում արտադրանքի վաճառքն առևտրի օբյեկտի միջոցով չի իրականացվում:

2. Ակտով արձանագրվել է, որ ԱՁ-ն խախտել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 3-րդ կետի պահանջները: Ակտը կազմելիս հարկային տեսուչների կողմից նախ հաշվի չեն առնվել «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որի համաձայն՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է Հայաստանի Հանրապետության տարածքում անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանական գործունեություն իրականացնողների և կազմակերպությունների կողմից առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով իրականացվող դրամական հաշվարկների բոլոր դեպքերում, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի: Միաժամանակ, հաշվի չեն առնվել նաև օրենքի նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ գործունեության կամ գործունեության իրականացման (գտնվելու) վայրի առանձնահատկություններից ելնելով կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով դրամական հաշվարկներ կատարելիս կազմակերպությունների ձեռնարկատերերի համար հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր չլինելու դեպքերը: Մասնավորապես, ՀԴՄ-ի կիրառումը պարտադիր չէ առևտրի իրականացման վայրերում (առևտրի կենտրոններում, սպառողական ապրանքների շուկաներում, գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում, տոնավաճառներում և ցուցահանդես-վաճառքի անցկացման վայրերում) գտնվող բաց վաճառատեղաններից գյուղատնտեսական արտադրանքի, ինչպես նաև վերգետնյա տրանսպորտային միջոցներով իրականացվող գյուղատնտեսական արտադրանքի վաճառքի: Հետևաբար, ԱՁ-ի կողմից իրականացվող գյուղատնտեսական արտադրանքի վաճառքի մասով «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին համապատասխան ՀԴՄ-ի

կիրառումը պարտադիր չլինելու դեպքում նույն հոդվածի 3-րդ մասի պահանջները խախտված չէին կարող համարվել:

ՀԴՄ-ի կիրառումը պարտադիր չլինելու դեպքում ԱԶ-ի նկատմամբ չէր կարող կիրառվել նաև օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով սահմանված պատասխանատվությունը:

3. Միաժամանակ, ստուգման ակտը կազմելիս չեն պահպանվել նաև «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետները: Մասնավորապես, ակտի նախագիծը կազմվել է 04.02.2016թ. և ԱԶ-ին ուղարկվել փոստով 10.02.2016թ, իսկ ստուգման ակտը կազմվել է 22.02.2016թ:

Ելնելով վերոնշյալից և հաշվի առնելով, որ բացակայում են «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի դրույթների խախտման հիմքերը, Ա/Ձ Ավագ Սամվելյանը խնդրում է չեղյալ համարել Արտաշատի տարածքային հարկային տեսչության 22.02.2016թ. թիվ 6116986 ակտը:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Արտաշատի ՏՀՏ պետի 26.01.2016թ-ի թիվ 6116986 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Ավագ Սամվելյան մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Արտաշատի ՏՀՏ 22.02.2016թ-ի թիվ 6116986 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 300.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ավագ հ/տ Դավիթ Սիմոնյանի կողմից 04.02.2016թ-ին ժամը 08:40-ին Երևան քաղաքի Վ.Սարգսյանի մարզադաշտին կից տարածքում Ա/Ձ Ավագ Սամվելյանին պատկանող առևտրի կետից կատարվել է գնում 12000 դրամի չափով՝ 1 փունջ (20 հատ) կարմիր վարդեր 12000 դրամ արժեքով, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով: Ա/Ձ Ավագ Սամվելյանը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել, քանի որ տվյալ հասցեում գրանցված և տեղադրված ՀԴՄ չուներ: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման:

Ստուգմամբ պարզվել է, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները: Արդյունքում կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ի կետի բ) ենթակետով նախատեսված տուգանքը՝ գումարով 300.000 դրամի չափով:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Հայաստանի Հանրապետության տարածքում անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանական գործունեություն իրականացնողների (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր) և կազմակերպությունների կողմից առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով իրականացվող դրամական հաշվարկների բոլոր դեպքերում (ներառյալ՝ կանխավճարները) հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Գործունեության կամ գործունեության իրականացման (գտնվելու) վայրի առանձնահատկություններից ելնելով՝ կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով դրամական հաշվարկներ կատարելիս կազմակերպությունների և

անհատ ձեռնարկատերերի համար հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր չէ հետևյալ գործունեության տեսակների մասով՝

...

զ) առևտրի իրականացման վայրերում (առևտրի կենտրոններում, սպառողական ապրանքների շուկաներում, գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում, տոնավաճառներում և ցուցահանդես-վաճառքի անցկացման վայրերում) գտնվող բաց վաճառասեղաններից գյուղատնտեսական արտադրանքի և քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող գործածության մեջ եղած անձնական օգտագործման իրերի վաճառքի»:

Սույն գործում առկա ապացույցների, գանգատաբերի ներկայացուցչի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց բերված փաստարկների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ Ա/Ձ Ավագ Սամվելյանի կողմից իրականացվող գործունեությունը համապատասխանում է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի գ) կետով նախատեսված գործունեության տեսակին: Մասնավորապես, Ա/Ձ Ավագ Սամվելյանի կողմից Երևան քաղաքի Վ.Սարգսյանի անվան մարզադաշտի հարևանությամբ գտնվող տարածքում իրականացվում է գյուղատնտեսական արտադրանքի (ծաղիկի) վաճառք, որի մասով հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր չէ:

Քննարկման ընթացքում հաստատվեց նաև գանգատաբերի բերված փաստարկը՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի դրույթները խախտված լինելու վերաբերյալ: Այսպես, նշված օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Ակտի նախագիծը ստուգում իրականացնող անձը 3 աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ առարկություններ ներկայացնելու նպատակով»:

Քննարկվող դեպքում ՀՀ ՖՆ Արտաշատի ՏՀՏ թիվ 6116986 ակտի նախագիծը կազմվել է 04.02.2016թ-ին, սակայն այն փոստային ծառայության միջոցով Ա/Ձ Ավագ Սամվելյանին է ուղարկվել միայն 10.02.2016թ-ին (4-րդ աշխատանքային օրը):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը՝

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Արտաշատի ՏՀՏ 22.02.2016թ-ի թիվ 6116986 ակտի 1-ին կետը:

**Հանձնաժողովի նախագահ՝**

  
**Վ. ԱՂԱԿՃԱՆԻԱՆ**  
